

ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ
ԱՆԳԼԵՐԵՆ ԴԱՐՉՎԱԾՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԿՐԱԼԵԶՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լեզվի սոցիալական և մշակութային պայմանավորվածության քննության գլխավոր ուղղություններից մեկը լեզվաերկրագիտությունն է: Այս ուղղության ներկայացուցիչները ելնում են այն փաստից, որ բառը նախ և առաջ միշտ է, իրականության այս կամ այն երևույթի նշան, ուստի նրա իմաստաբանական շերտում կարելի է գտնել և առանձնացնել որոշակի արտալեզվական բովանդակություն, որը որոշակի և անմիջական կերպով արտացոլում է այն մշակույթը, որին ծառայում է տվյալ լեզուն:

Հենց բառիմաստի շնորհիվ է իրականանում կապը բառային միավորների և արտալեզվական իրականության միջև:

Կոնկրետ սոցիալական իրականության մշակութապատմական տարրի առավել խորը ուսումնասիրությունը և յուրացումը կարևորագույն պայման է լեզուն տարբեր երկրների ժողովուրդների միջև որպես հաղորդակցության միջոց դիտարկելու խնդրում:

Օ.Ս.Ախմանովան նշում է, որ ցանկացած հաղորդակցական ակտի իրականացման անխախտ նախապայմանը պետք է լինի «խոսողի և լսողի կողմից երևույթների երկուստեք իմացությունը, որը լեզվական շփման հիմքն է» /1/ և որը լեզվաբանության մեջ ստացել է ֆոնային գիտելիքների սահմանումը:

Լեզվաերկրագիտության հիմնական օբյեկտը, ինչպես հաստատում է Տոմախինը /2/, ֆոնային գիտելիքներն են, որին տիրապետում են որոշակի լեզվական և էթնիկ հանրության անդամները, ուստի այս գիտության հետ հարակից է նաև հանրալեզվաբանությունը:

Վերեշագինը և Կոստոմարովը գիտականորեն հիմնավորեցին ֆոնային գիտելիքների գոյության օբյեկտիվ բնույթը, բացահայտեցին լեզվի կոմուլյատիվ (կուտակող) բնույթը, համաձայն որի լեզվական միավորները գիտելիք-

ների այն «շտեմարանն են», որը մարդը կուտակում է սոցիալական իրականության պայմաններում:

«Եթե նկատի ունենանք «Lingueparole» դիֆտոմիան, որն ըստ Սոսյուրի կազմում է «langue» ընդհանուր հասկացությունը, ապա խոսքին հատուկ է կոմունիկատիվ (հաղորդակցման) ֆունկցիան, իսկ լեզվին՝ կոմուլյատիվ (կուտակման) ֆունկցիան» /3/:

Եվ այսպես, լեզվի կոմուլյատիվ ֆունկցիան, հաղորդակցման կարևորագույն ֆունկցիայի հետ միատեղ լեզվական նշանի բաղադրիչ մասն է: Լեզուն այդ իր գործառնությամբ ներկայանում է որպես սերունդների միջև կապող օղակ և արտալեզվական հանրային փորձի փոխանցման միջոց:

Ժողովուրդների պատմության և մշակույթի կապը հատկապես արտահայտիչ արտացոլվում է դարձվածային միավորների դաշտում: Ասացվածքների, առակների, ասույթների մեծ քանակ արտահայտում են ազգային ինքնօրինակ շերտեր և ունեն լեզվապատկերային այն առանձնահատկությունը, որ բնորոշ է տվյալ ժողովրդին, սերում է նրա պատմությունից, մշակույթից, կենցաղից, ավանդույթներից:

Լեզուների միջև դարձվածային հարաբերակցության, այսինքն դարձվածային ընդհանրությունների առկայությունը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես համեմատական լեզվաբանության, այնպես էլ բանահյուսական ուսումնասիրության և ազգագրության տեսակետներից:

Բոլոր այն դարձվածային միավորներում, որ կապված են ավանդույթների, հավատալիքների հետ, վառ արտահայտված է լեզվի կոմուլյատիվ ֆունկցիան: Լեզվի կոմուլյատիվ և կոմունիկատիվ դերերի փոխկապը չափազանց կարևոր է, քանի որ այն տեղեկատվությունը, որին տիրապետում է որոշակի էթնիկական և լեզվական հանրությունը, կապված է ազգային մշակույթի և պատմության հետ և հաճախ համարժեք հաղորդակցման պարտադիր պայմանն է: Լեզվի այս երկու դերերի փոխազդեցությունը և կապը, որ իրականացնում են դարձվածները, դրանք դարձնում է երկրագիտական ինֆորմացիայի արժեքավոր աղբյուր/4/:

Դարձվածային միավորների քննության ընթացքում բացահայտվում է ոչ միայն քննվող դարձվածների իմաստը, այլև գեներտիկ նախատիպի ծածկագրի

վերծանումը, որի արդյունքում ստացվում են ֆոնային գիտելիքներ տվյալ ժողովրդի պատմության, կենցաղի, ավանդույթների, բարքերի, այսինքն բազմակողմ մշակույթի մասին /5/:

Ըստ Լ.Ի.Ռոյզենզոնի, «այս կամ այն ժողովրդի կյանքի և կենցաղի ինքնատիպությունը առավելագույնս արտացոլվում է դարձվածաբանության մեջ, որը խտացնում է տվյալ ժողովրդի հոգեբանության և մշակույթի ողջ բարդ համակարգը, նրա պատկերային մտածողության անկրկնելի կերպը» /6/:

Դարձվածաբանության առանձնահատկությունը, որպես երկրորդային նոմինացիա /7/, նրանում է, որ բառերի նախնական զուգորդման հիմքում ընկած գեներտիկ նախատիպը, փոխաբերության, փոխանունության և բաղադրիչային կազմի այլ փոխակերպումների միջոցով կոդավորում է տվյալ լեզուն կրող ժողովրդի մասին հանրամշակութային ինֆորմացիան, և այդպիսով դարձվածներին հաղորդում է իր կունուլյատիվ դերը, այսինքն տվյալ հանրության կողմից հավաքագրած ինֆորմացիան ամրագրելու, պահելու և փոխանցելու դերը, այդպիսով ստեղծելով «հորիզոնական ենթատեքստ» /8/, այսինքն ֆոնային գիտելիքների պաշար տվյալ ժողովրդի բազմակողմ մշակույթի մասին:

Դարձվածաբանությունը երկրի մասին ոչ միայն բանահյուսական, այլև հանրամշակութային ինֆորմացիայի ամենահարուստ կրողն է և աղբյուրը: Ուստի հետաքրքիր է ըննել որոշ դարձվածներ և դրանց համարժեքները կամ թարգմանությունները անգլերենի զուգորդությամբ:

Դարձվածների մեր ընտրած խումբը վերաբերում է *մարմնի մասերի անվանումներով* իմաստակառուցվածքային համարժեքներին, որոնք կարող են լինել ինչպես լիարժեք, այնպես էլ ոչ լիարժեք դարձվածային կառուցվածքներ: Տարբեր լեզուների դարձվածների համարժեքության բացահայտման և առավել հստակ որոշարկման պետք է հիմք ընդունել երեք չափանիշներ. 1/իմաստային, 2/ կառուցվածքա-քերականական և 3/բաղադրիչային: Ընդ որում իմաստային մակարդակը (որ իր մեջ ներառում է սիգնիֆիկատիվ-դենոտատիվ, գործառնառճական և զգայաարտահայտչական լրացուցիչ իմաստներ) հիմնական, որոշիչ և առավել կարևոր մակարդակն է:

Այսպիսով կարելի է առանձնացնել դարձվածների հետևյալ տիպերը.

1. Դարձվածային համարժեքներ (լրիվ և մասնակի)

Դարձվածային համարժեքներ են այն դարձվածները, որոնք առանձնանում են իմաստային նույնությամբ, համընկնում են կամ մոտ են իրենց կառուցվածքաքերականական կազմությամբ և բաղադրիչային կազմով: Արտահայտման պլանի տարբերություններից կախված, միջլեզվային դարձվածաբանական համարժեքների համընկնման աստիճանը կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

ա) Լիարժեք համարժեքներ, այսինքն, դարձվածներ, որ լրիվ համընկնում են թե՛ արտահայտման պլանով, թե՛ բովանդակային առումով. օր. երկար լեզու - long tongue, անզեն աչք - naked eye

բ) Մասնակի համարժեքներ, որ բնութագրվում են իմաստային նույնությամբ և դարձվածային միավորների արտահայտման պլանում աննշան տարբերություններով.

- միայն մեկ բաղադրիչի կամ բաղադրիչային կազմի աննշան տարբերությամբ նույնական իմաստով դարձվածներ.

օր. մինչև կոկորդը, ականջները մազերի ծայրը - up to the chin

- դարձվածներ, որ ունեն որոշակի ձևաբանական տարբերություններ (թիվը, նախդիրը, հոլովը, և այլն).

օր. լեզուն պահել ատամների արանքում - keep one's tongue between one's teeth

հոնքերը բարձրացնել - raise the eyebrow

- դարձվածներ որ տարբերվում են բաղադրիչների

հաջորդականությամբ. օր. ծոծրակին աչքեր ունենալ - have eyes at the back of one's head

2. Դարձվածային համանմանություններ (լրիվ և մասնակի)

Համանման դարձվածները /անալոգները/ այն միավորներն են, որ արտահայտում են միանման և մոտ իմաստներ, սակայն արտահայտման պլանում կամ լիովին տարբերվում են, կամ ունեն մոտավոր նմանություն:

Համընկնման կամ տարբերության աստիճանը միջլեզվային համանման դարձվածներում կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

ա) դարձվածային համանմանություններ՝ կազմության կառուցվածքաքերականական մոտավոր նմանությամբ և բաղադրիչային կազմում միևնույն բառույ-

թով: Կառուցվածքաքերականական մոտավոր մեանությունը նշանակում է, որ դարձվածային միավորները պատկանում են միևնույն դասին (բառակապակցությունը կամ բայային է, կամ սուբստանտիվ, կամ ադյեկտիվ և այլն: նախադասության կառուցվածքով)։

օր. մեկի վզից կախվել – to hang around smb's back

բ) դարձվածային անալոգներ, որոնք ունեն մոտավոր մեանություն իրենց կառուցվածքաքերականական կազմում, սակայն բաղադրիչային տարբեր կազմ. օր. մեջքը ցույց տալ մեկին – give smb. the back

գ) թե՛ կառուցվածքաքերականական կազմությամբ, թե՛ բաղադրիչային տարբեր կազմությամբ դարձվածներ: Բաղադրիչային կազմում տարբերությունները հաճախ ուղեկցվում են նաև կառուցվածքային տարբերություններով.

օր. փորը կատու մտնել – have butterflies in one's belly

դ) մասնակի անալոգների միջանկյալ խումբը, որ ունեն իմաստային մոտավոր մեանություն, բաղադրիչային տարբեր կազմ և կառուցվածքաքերականական մոտավոր մեանություն. օր. աչքի պոչով տեսնել, ծածուկ, գողունի դիտել – see smb. out of the corner of one's eye

Նման դարձվածները միայն պայմանականորեն կարելի է դասել անալոգների շարքին:

3. Ոչ համարժեք դարձվածային միավորներ են համարվում հայերեն կամ անգլերեն այն դարձվածները, որոնք չունեն համապատասխան միավորը մյուս լեզվի դարձվածաբանական համակարգում:

ա) դարձվածներ, որոնք իմաստը մյուս լեզվում կարելի է արտահայտել միայն նկարագրության միջոցով, մեկ այլ բառակապակցությամբ / ոչ դարձվածային միավորի/:

Թարգմանական համարժեքի ընտրությունը տվյալ դեպքում կատարվում է պատճենման /դարձվածային բաղադրիչային լրիվ կամ մասնակի պատճենում/ և նկարագրական թարգմանության միջոցով. օր. բարեհաճ ականջ – willing ear

ծոծրակը /ականջների ծայրը/ տեսնել – smb will never have or see smth.

Որպես կանոն, նկարագրական թարգմանության ժամանակ ընդլայնվում է բաղադրիչային կազմը, տեղի է ունենում նշանակալի փոփոխություն կառուց-

վածքաքերականական կազմում. օր. ականջ դնելու սովորություն ունենալ - have long ears

բ) լեզվի այն դարձվածները, որ ունեն իմաստային համապատասխանություն թարգմանող լեզվում՝ առանձին բառույթի կամ առանձին բառույթների խմբի տեսքով: Նման դարձվածների համար բնորոշ է թարգմանության բառային մեթոդը. օր. երեկվա երեխան է, բերանից կաթի հոտ է գալիս - wet behind the ears

գ) խառը խումբ, որոնք այն դարձվածներն են, որոնց իմաստը կարող է թարգմանվել ինչպես առանձին բառույթների, այնպես էլ բառակապակցությունների միջոցով և նկարագրական թարգմանությամբ. օր. քիթը կախել - to keep chin; to look down in the mouth; to be /become, look/ downcast /depressed/

Մարմնի մասեր արտահայտող հայերեն դարձվածների և նրանց անգլերեն ոչ լիարժեք հարաբերակիցների քննությունը թույլ է տալիս առանձնացնել միջլեզվային դարձվածային հարաբերակիցների ևս մի տեսակ: Մի շարք հայերեն դարձվածներ, որոնցում «մարմնի մասային» բաղադրիչն ունի խորհրդանշական իմաստ, իրենց հարաբերակիցն ունեն նաև անգլերենում: Հայերեն դարձվածները և տվյալ դարձվածների հարաբերակիցները միմյանցից տարբերվում են թե՛ կառուցվածքային, թե՛ բաղադրիչային կազմի և թե՛ գործառնական տեսակետից: Նրանց ընդհանրությունը մարմնի մասերի անվանման և նրանց վերաբերող խորհրդանշային իմաստի համանմանության մեջ է. օր. սիրտը կրծել - eat one's heart

դեմքով հրեշտակ է, հոգով՝ սատանա - a fair face may hide a foul heart
Զննության ենթարկված դարձվածների շարքում կա դարձվածային հարաբերակիցների մի տեսակ ևս. այս դարձվածները, ունենալով ընդհանրություններ արտահայտության պլանում, հիմնված լինելով նույն պատկերի վրա, միմյանցից զգալիորեն տարբերվում են իրենց արտահայտած իմաստներով:

Հայերեն «գլխին կանգնել» դարձվածը նշանակում է 1. *անսպասելի հայտնվել, գալ մոտը կանգնել*; 2. *մեկին պաշտպան, թև-թիկունք լինել*; 3. *պատրաստ լինել մի բան կատարելու համար*, իսկ անգլերեն 'standing on one's head' դարձվածը նշանակում է *անել մի բան շատ հեշտությամբ*: Կամ՝

«ականջը քորել» հայերեն դարձվածը նշանակում է *անօգնական, անզոր զգալ*, իսկ անգլերեն *'to have itching ears'* դարձվածը նշանակում է *բամբասանքի և նորությունների սիրահար լինել*:

Միևնույն աղբյուրներից դարձվածների փոխառությունը բերում է դարձվածային հարաբերակիցների առաջացմանը նաև միմյանց հետ շփումներ չունեցող լեզուներում: Դարձվածների պատճենման ամենից առատ աղբյուրը Աստվածաշունչն է և անտիկ գրականությունը:

Բացի գլխավոր աղբյուրներից, դարձվածների առատ աղբյուր է նաև բանավոր խոսքը: Այդ դեպքում շատ ավելի դժվար է որոշել, թե լեզուներից որ^ո մեկն է փոխատու լեզուն և ո՞րը փոխառողը:

Բազմաթիվ դարձվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենում և անգլերենում նշանավոր ընդհանրություններ կան: Նման ընդհանրությունների համար առանձնացվում են մի քանի պատճառ: Նախ՝ ծագումնաբանական ընդհանրությունը /9/: Ապա տիպաբանական ընդհանրությունը, որը պայմանավորված է մարդու, նրա մտավոր գործունեության, նրա կողմից իրականությունն ընկալելու և վերացականորեն իմաստավորելու կարողությունների ընդհանրությամբ: Վ.Մ.Մոկիենկոն գտնում է, որ հավանական է, որ տարբեր ցեղերին և ազգերին պատկանող մարդկանց պատկերավոր տրամաբանությունն ընդունակ է համընդհանուր կաղապարներ ստեղծելու: Ընդհանուր պայմանները, մարդկության մշակութային զարգացման ընդհանուր մակարդակը ապահովում են մտածողության ընդհանրություն (իհարկե, ոչ բացարձակ): Այստեղից էլ բազմաթիվ կայուն արտահայտությունների այն ընդհանուր լեզուն, որ գոյություն ունի ամենատարբեր ժողովուրդների մոտ:

Այսպիսով, տարբերվում են դարձվածների և խորհրդանշային իմաստների միջլեզվային ընդհանրության երկու հիմնական պատճառ՝ ծագումնաբանական և տիպաբանական:

Գալով դարձվածային հարաբերակիցների առաջացման պատճառներին, կարելի է պնդել, որ ինչքան շատ են երկու դարձվածային հարաբերակիցների միջև իմաստաբանական, կառուցվածքային, բառային կազմի ընդհանրությունները, այնքան ավելի հավանական է, որ դարձվածային լիարժեք հարաբերակիցներն ունենան ընդհանուր ծագում:

Դարձվածաբանությունը չափազանց տարողունակ և բազմազան ոլորտ է, որի քննությունը ներառում է ամենատարբեր գործոններ սկսած տվյալ լեզվի բառային շերտից մինչև այդ լեզուն կրող ժողովրդի պատմամշակութային շերտը: Ուստի, դարձվածաբանությունը, իսկ առավել լայն առումով, լեզվա-երկրագիտական խնդիրները մշտապես արժանանում են լեզվաբանների, թարգմանիչների ուշադրությանը և անընդհատ փոփոխվելով և զարգանալով, կարող են հենազա քննության:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն

1. Ахманова О. С. Словарь лингвистических терминов. М., 1980, стр. 245.
2. Томахин Г. Д. Фоновые знания как основной предмет лингвострановедения. Ин. яз. в школе. 1980, стр. 17.
3. Верещагин Е. М., Костомаров В. Г. Лингвострановедческая теория слова. М., Рус. яз., 1980, стр. 42.
4. Брагина А. А. Лексика языка и культура страны в лингвострановедческом аспекте. М., 1981, стр. 18.
5. Голдабина С. В., Федулёнова Т. Н. Роль античной и крестьянской культуры в изучении фразеологии современного английского языка//Культуроведческие аспекты рос. образования; Теория, проблемы, опыт реализации: тезис нац.-практич. конф. Тюмень: ТГУ, 1996, стр. 62-64.
6. Ройзензон Л. И. Фразеология и страноведение.- бюллетень по фразеологии N1, Самарканд, 1972, стр. 13.
7. Кунин А. В. Английская фразеология; теоретический курс. М., Высш. шк., 1970.
8. Чинекова Л. А. Идиоматическая фразеология современного английского языка в языковедческом и методическом освещении; теория и практика изучения современного английского языка, сб. н. тр., МГУ, 1985, стр. 26.
9. Мокиенко В. М., Образы русской речи, М., 1985.
10. A. V. Kunin, English-Russian Phraseological Dictionary. Moscow, 1984.
11. Սեֆերյան Ս.Ս., Հովհաննիսյան Լ. Վ., Լազարյան Ա. Ա.. Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան: Երևան, 1986.
12. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան: Երևան, 1975.
13. Սարգսյան Վ. Ա. Հայոց լեզվի դարձվածներ նկարներով: Երևան, 1989.
14. A. P. Cowie, R. Mackin and I.R. McCaig. Oxford Dictionary of English Idioms. Oxford University Press, 1983.